ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

Ի պատասխան Ձեր 04.12.2023թ. Հ-20 գրության՝ Ամանորի և Սուրբծննդյան տոնակատարությունների մշակութային ծրագրերի ցանկը ներկայացնելու վերաբերյալ, տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը նախատեսում է իրականացնել ամանորի թատերահամերգային միջոցառումներ և համապատասխան կազմակերպություններից ձեռք կբերվեն թատերահամերգային միջոցառումների շուրջ 4000 տոմսեր, որոնք կփոխանցվեն սոցիալական որոշ խմբերի ընտանիքների երեխաներին (սոցիալապես անապահով, Արցախից բռնի տեղահանված, հաշմանդամություն ունեցող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված և այլն):

Միաժամանակ տեղեկացվում է, որ աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության կողմից նախաձեռնված ծրագրերն են.

1. Գլխավոր տոնածառի և վարչական շրջանի տոնածառների տեղադրում և ձևավորում:
2. Երևան քաղաքի ամանորյա լուսավորության ապահովում:
3. Սուրբծննդյան տոնավաճառի կազմակերպման և ձևավորման աշխատանքների իրականացում:
4. Գլխավոր տոնածառի լույսերի վառման տոնակատարությունների կազմակերպում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ